

ՄԱՅԻՍ

Տարեկան գին 5 ռուբլ, կես տարվանը 3 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Մատուրեանի խանութում:

Օտարաբաղադրյալը գինում են ուղղակի
Тифлиса, Редакция „Маяк“.

Խմբագրատանը բաց է առաւ սեան 9—12 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամէն լիզվով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառից մի կոպէկ:

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ԲԱՅԱՆՈՐԴՆԵՐԻՑ
ՇՈՒՏՈՎ ՀԱՅՑՆԵՆԻ ՄԵՋ «ՄՇԱԿԻ» ՏԱՐԵԿԱՆ
ՎՃԱՐԸ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դրական տարաբնույթներ — Ն երբ ին տե-
սութիւն: Նամակ Ս. Պետրոբուրգից, Նա-
մակ Շամախուց: Արտաքին տեսութիւն: Սա-
մարո-Ունգարիա: Ֆրանսիա: Թիւրքիա: —
Յայտարարութիւններ: Բանասիրական: Տարե-
կան և վաստակական անցեալ և արդի վի-
ճակը:

ԳՐԱԿԱՆ ՏԱՐՏԻԹՅՆԵՐ

Ֆրանսիացի երեւելի Մօլիէրի թատրոնա-
կան պիեսաներից միում կայ մի անձն, Տար-
տիւֆ, որ կեղծաւորութեան և խաբէրայու-
թեան տիրէ: Նա, օրինակ, իրան ցոյց է
տալիս վերին աստիճանի բարոյական, — բայց
ինքն շատ անբարոյական է. նա իրան ցոյց է
տալիս աստուածապաշտ, — բայց մի և նոյն
ժամանակ բոլորովին այն չէ, ինչ որ երևում է:
Այսպիսի տիպեր շատ կան և ամեն աղղու-
թեան մէջ... Տարտիւֆը, այդ չինձու բա-
րոյականութեան տիպը, միշտ չափից դուրս
իրան վրդոված է ցոյց տալիս բարոյականու-
թիւնը կամ կրօնը ամեն մի փոքր ի շատ
զիպող երեւոյթի առջև: Բայց նշանաւորը
այն է, որ նա այնքան չէ վրդովում զաղա-
փարի ներքին բովանդակութիւնից, որքան
ամեն երեւոյթի արտաքին կողմից... Նրան
դրակցում է, նրա համար նշանակութիւն
ունի ոչ թէ դործի էութիւնը, բայց նորա ար-
տաքին վայելուչ տեսքը: Տարտիւֆի համար
ձեռնաւելի նշանակութիւն ունի, քան բովան-
դակութիւնը: Նա բարոյական է համարում
ոչ թէ այն անձին որ իր գործերով բարի և
արդար է, բայց նորան որ ամեն տեղ բարձ-

րածայն խօսում է բարոյականութեան նշա-
նակութեան մասին, վրդոված է ցոյց տալիս
իրան լրբութիւնից և այլն... Տարտիւֆը աս-
տուածապաշտ է ոչ թէ այն պատճառով որ
սիրում է Աստուծուն, որպէս արդարութեան
յարմարական զաղափար, բարի է գործում,
օգնում է աղքատին և կարօտեալին, սիրում է
մարդկութիւնը, աշխատում է իր նմաններին
պիտանի լինել, զոհում է իր անձը իր ընկերի
համար, — ոչ, նա աստուածապաշտ է այն պատ-
ճառով, որ աչքերը կեղծաւոր կերպով ցած
զցած, տէր-ոգոյրմեան ձեռքին, անդադար
ձուրդ գնելով և խաչ հանելով, իւրաքանչիւր
բար կեղեցիկ յատակի վրա է համբուրում և
աղօթքներ է փսփում ու աս. քաջում... իսկ
դուրը մի գիտէ, զուցէ և հարստահարում է
իր նմաններին:

Բաւական չէ որ տարտիւֆութիւնը կար-
մի հասարակութեան մէջ, — այժմ նա մուտք
է գործել և մեր լրագրութեան մէջ:

Մեր գրական տարտիւֆների համար բո-
լոր բրիտանիկութիւնը և լուսաւորական կրօնը
կայանում են ոչ թէ բարոյական, բարձր սկզբ-
ների մէջ (որոնց նրանք զբաղաւայէս անըն-
դունակ են ըմբռնել), այլ միայն արտաքին
արարողութիւնների մէջ: Նրանք մինչև այն
աստիճան միամիտ են (?) որ չեն կարծում թէ
տղէտ, անբարոյական հոգեւորականութիւնը
կարող է սպառնալի երեւոյթ լինել կրօնի և
կեղեցիկ գոյութեան համար, իսկ այդ սպառ-
նալի երեւոյթը նշմարում են միայն այս կամ
այն արարողութիւնը, այս կամ այն ծէսը չը
կատարելու մէջ: Նրանց համար սկիզբները,
բարոյական հիմունքները, կրօնի և բարոյա-
կանութեան առաջնորդող զաղափարները ան-
մատչելի լինելով, նորա տեսնում են կեղեցիկ
և կրօնի հաստատութիւնը միայն արտաքին
ձեւերի մէջ: Եթէ, դիցուք, մի քահանայ,
ամենամաքուր բարոյականութեան տէր մարդ,

չը կատարեց կեղեցիկ ընդունած այս կամ այն
արարողութիւն, — կեղեցիկ, կրօնը քանդ-
վելու վրա են, աղաղակում են տարտիւֆները,
իսկ եթէ մի տղէտ և անբարոյական հոգեւո-
րական, որ անձամբ անձին վնասակար է ամ-
բողջ հաստատութեան համար, ձիջը և կեղ-
ծաւոր կերպով կատարում է կեղեցիկ իւրա-
քանչիւր ծէսը և արարողութիւնը, — տար-
տիւֆները բարոյապէս բոլորովին բաւական
են, զոհ են...

Ա. Պօլսում մի հայոց տարտիւֆ լրա-
գիր կայ, որ անուանվում է «Մասիս» լրա-
գիր և որին զբաղաւայէս մինչև այժմ մեր
փոքր և ողորմելի տարտիւֆները, լրագրու-
թեան կատարելի տարտիւֆ համարելով, նրա
նից օրինակ էին առնում: Այլքին համար-
ներէն մինչև մեր Տարտիւֆ — Մասիսը
սաստիկ վրդոված է ցոյց տալիս իրան, որ մի
հայոց կեղեցիկ մի վարդապետ օտնա-
լուստի ժամանակ, փոխանակ տիրացուների
օտնները լուսնալուս, լուսն նոցա ձեռ-
ները... Ուրա հեռանալը «Մասիս» խօս-
քերով ուրիշ բան չէ կարող լինել, եթէ ոչ
«ի վերջոյ նոյն իսկ Հայաստանայց կեղեցիկ
բայցալուսն»:

Պարզապէս հետեւել յօղվածք:
Արժանահաւատ անձինք զարմացմամբ կը
պատմեն մեզ թէ Աւագ հիւնդարթի օրը
Ղալաթիոյ Ա. Լուսաւորիչ կեղեցիկ քա-
ղաքը Արթ. Արթուրոս վարդապետ, Արծա-
կան ժողովոյ անդամ, Ամալուրայի արարողու-
թիւնը կատարած ժամանակ, քահանայներուն
ոտքը, իսկ դպիր տղայոց ձեռքը լուսնի է:
Ահաւասիկ նոր արարողութիւն մը, որ
բացարձակապէս հակառակ է Հայաստանայց
կեղեցիկ լուսաւորչաւանք սովորութեան և
նոյն իսկ Ա. Լուսաւորիչի հրահանգին:
Ինչ յանդիմութիւն, տերունական յիշա-
տակ մը փրկելու համարձակի Հայ վարդա-
պետ մը, այլապէս, ինչպէս լինել Ա. Լուսաւորիչի
հաստատած նուիրական արարողութիւն մի
զայլթաղութիւն ժողովրդեան, կարեւորու-

թիւն չտայ մաշտոցին, տօնացոյցին և ճա-
շտցին մէջ բացարձակապէս նշանակուած կանո-
նին, որ կրէ. «Լուսաւորչան կամ քահանայն
«առեալ զղինջակ, նստցի ի ծուր, և լուսնից
«զոտս ամենեկունց» ի մեծաց մինչև ցփո-
«բուն»... վերջապէս անաստէ նոյն իսկ կեղ-
եցիկ հիւնդարթի «Վարդապետ պատուէրին
որ կրէ. «Եթէ ևս լուսնի զոտս ձեռք, տէր
«և վարդապետ, և դուք պարտիք զմեկմանց
«ոտս լուսնալ. զի օրինակ մի ետու ձեռք
«պէս ևս ձեռք արարի, և դուք առնիջը»:

Այս տէրունական պատուէրն և Հայաս-
տանայց կեղեցիկ ի սկզբանէ ի վեր հաս-
տատուած և մինչև այսօր անայլապաշտ գործա-
դրած ոտնադրայի արարողութիւնն ըստ հա-
ձոյս փոփոխել, օրինաւորութեան ծայրայեղ
զուլթիւն մ'է որ կրէք չիրար անդատապարտ
մնալ կեղեցիկ օրինաց առջև:

Տեսնելով թէ ազգային կեղեցիկ իշխա-
նութիւնն այսպիսի յանդուգն ծայրայեղ
թիւն մ'անպատիւ պիտի թողնէ, անհաւա-
րութիւն ընկող պիտի ծածկէ, ինչպէս որ ուրիշ
առիթմերու մէջ կը տեսնուի:

Եթէ Ա. Պարտիւֆը հայրն և Արծաւան
ժողովն այս ծանրակշիւ պարագայի մէջ ալ
անտարբեր մնան և պարտաւարտաշար չան-
րինեն, հեռանալն ուրիշ բան չլինար ըլլալ
բայց եթէ կրօնական զեղծմանց լուսնայն բա-
շարիւթիւն, կեղեցիկ կարգաց և աւան-
դութեանց ընդհանուր խանգարում, և ի վեր-
ջոյ նոյն իսկ Հայաստանայց կեղեցիկ բոյ-
բոյնում:

Լաւ չէր լինի արդեօք, որ Տարտիւֆ —
Մասիսը հանգիստ թողնէր տիրացուների
ոտները, որոնց լուսնած կամ չը լուսնած
լինելը շատ փոքր նշանակութիւն ունի հո-
գեւորականութեան բարոյական և մտաւոր մա-
կերելոյթի բարձրանալու համար և աւելի մտա-
ծէր թէ որքան վտանգաւոր է որ մեղսւում,
քանի գնում է, աւելի և աւելի տարածվում է
արտաքին ծիսապաշտութիւն, և կեղ-
ծաւոր աստուածապաշտութիւն, շին-
ծու բարոյականութիւն, վերջապէս ա-
ւելի և աւելի խոր արմատներ է գցում տար-
տիւֆութեան ոգին...

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԱՐՈՂԻ ԵՒ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԱՆՑԵԱԼ ԵՒ
ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ

Շատ հեռու չէ այն ժամանակը, երբ Տարոնը
և Վասպուրականը թէև Տաճկաստանի մի մասն
էին կազմում, բայց զրոյրի զանազան ցեղերը,
օգուտ քաղելով ունեւորի պիտուութեան թուու-
թիւնից, տիրում էին Հայաստանի այդ երկու ա-
մենամեծ նահանգներին, սկսեալ Սև ծովի հարա-
ւա-արեւելեան եզրերից, կորդուաց լեռներից, մինչև
Մուսուլ և Ասորիստանի սահմանները:

Յիշեալ նահանգները պարունակում էին իրանց
մէջ հետեւեալ գաւառները՝ Արզուում, Բայազէդ,
Հաղբակ, Վան, Բաղէ (Բիթլիս), Մուշ, Շատախ,
Սասուն, Խիզան, Մոզազ երկիր, Չարսանջախ,
Փեղու, — այդ գաւառներին տիրում էին քրդերը:

Միացեալ ազգաբնակչութիւնը, բացի քրդերից,
էին Հայեր, Ասորիներ, Հրեաներ և Թուրքեր:
Հայերը իրանց թուով բազմութիւն էին կազմում,
և համարեա, բաղկացնում էին ամբողջ աղղա-
քնակութեան կես մասը:

Որպէս զի գիտենալ, թէ ինչ գրութեան մէջ
էին այն ժամանակ հայերը, պէտք է նախ ծա-
նօթանալ տիրող աղղիք — քրդերի բնաւորութեան
և նրանց զաղաքական կազմակերպութեան հետ:

Քրդերը բաժանված էին զանազան ցեղերի,
որոնց գլխաւորներն էին՝ Զալալի, Ռաւանդ, Բիլ-

բաստ, Մամբանի, Հարսուշի, Շիկակ, Հալբի,
Եզլի: Դրանք շատ քիչ էին զանազանութեամբ
յատկութիւններով և սովորութիւններով: Խօսում
էին մետական լեզուով, որ իւրաքանչիւր ցեղի մէջ
որոշվում էր բարբառների առանձնութեամբ: Կը-
րծում մասնատական էին սուրենի ազնայից:
Եզլիները միայն բաժանված էին կրծում, որոնք
պաշտում էին չար և բարի օգնիւնը, երկրպագու-
թիւն էին տալիս անային օջախին: Դրանք գոյց
միացորդներ են Արամաղղի և Արմինի հին երկր-
պագուներից, որոնց մէջ մինչև այսօր երևում են
մոգական ծէսեր:

Քուրդերը չունէին զիր և գրականութիւն. չէյ-
լսերը (դնպիտները) միայն գիտէին արաբերէն
կարգաւ, որով աւանդում էին ժողովրդին իրանց
կրօնի հրահանգները, որոնք բովանդակվում էին
մի քանի պարզ և թեթիկ, արտաքին ծիսակատա-
րութիւնների մէջ: Միակ բանը, որ գիտէին ամեն
քուրդ իւր հաւատքի հանգանակից, էր նախ զը,
որը նա մեքենաբար և ձիւտ կերպով կատարում
էր նշանակեալ ժամերում, առանց հասկանալու,
թէ ինչ էին նշանակում, իւր այնքան ջնջմուն-
դութեամբ արտասանած, արաբական բառերը:
Բացի դրանից, քուրդը գիտէր միմ ժողովրդի —
Մուսուլից անուրը, և նրա նախկին խալիֆայիտի
Օմարի, Օմարի, Աբու-Բալթի անունները, և
աւելի ոչինչ:

Բայց ժողովրդական բնաստեղծութիւնը կեն-
դանի էր քրդերի մէջ. նա ծագելով ամբողջ իս-
կական կեանքից, ունի նոյն բնաւորութիւնը և
ոգին, որով ապրում էր ինքը ամբողջ, Հովիւր-
գութիւնը և քաջազնական հանդիպութիւնը զը-
լաւոր տեղն էին բունում նրանց բնաստեղծու-
թեան մէջ: առաջինը որպէս մի խաչարած աղղի
կեանքի առնչութիւն, երկրորդը որպէս նրա
պատերազմական ոգու արտայայտութիւն, Հովիւ-

կան երգերը տխուր էին և մկամազձու, նրանք
խիստ մեղմ կերպով ներդաշնակվում էին հովի-
սրինդի խուլ և ձգական հնչումների հետ: Իսկ
պատերազմական երգերը կրքոտ, վառվառ և
խորեղ էին, նրանք վաճառելի համարձակութեամբ
որոտում էին թմբուկների ձայնի հետ:

Ոչ մի նշանաւոր երեւոյթ չէր կորցնում իւր
հեռքը քուրդի կեանքի մէջ: ժողովրդական ոգին
իւր տաղերով կամ փառաբանում էր մէկի քա-
ջագործութիւնը, կամ պարսաւում էր միւսի թու-
լաստութիւնը: Դժուր կեցութեան մէկը թշնամուց,
կամ խոյս տուց նա կուրի դաշտից, միւս օր
կանաչքը և աղջիկները յօրինում էին նրա մասին
զանազան կծու պարսաւներ, և երբ արագ թռ-
չում էր ամեն երեխայի, ամեն չափահասի բերա-
նից:

Թուրք, մի ջուլտ ապրճանակ, վաճառ և նի-
զակը քուրդի մարմնի անդամներ են, որոնք միշտ
մնում են նրանից անբաժան, հրացանը նա գործ
է ածում մեծ կուրծները մէջ: Թամբած ձին, որ
միշտ պատրաստ է նրա չաղրի առջև, քուրդի
հաւատարմի ընկերն է. նրան սիրում է տէրը
աւելի քան իւր կնոջից, աւելի քան իւր որդի-
ներէն: Քուրդն իւր չաղրի մէջ հիւրասէր է որ-
պէս Արաբիայի, բայց նա չի խնայելու կողոպտել
նոյն հիւրին, եթէ նա կը հանդիպէր մէկ մզոն
հեռու իւր չաղրից: Արեան վրէժնորութիւնը,
որպէս ամեն կիսաւայրենի ցեղերի մէջ, նոյնպէս
քուրդի մէջ, անցնում է սերունդից սերունդ:
Սպանված հանգիստ չէ իւր դերեզմանի մէջ,
քանի նրա արեան փոխարէնը չէր առնվել սպա-
նոյրից, կամ նրա մօտ աղղակաւորներից: Սպանողը
այն ժամանակ միայն աղաւթ է մնում վրէժնոր-
դութիւնից, երբ գնում է իւր ոտնի տունը, իւր
սուրը քցում է նրա ոտքի տակ, և ներողութիւն է
խնդրում: Բայց հաղւել կը գտնվէր մի քուրդ, որ խո-

նարկէր մինչև այս աստիճան ստորութիւն, Քուրդը
քննախնդիր է և օխերիմ. նա մինչև մահ չէ մո-
ռաւում վրաւորանքը կամ անպատուութիւնը,
քանի լրակատար բաւականութիւն չէր ստացել:
Նա մի և նոյն ժամանակ շատ հանդուգնեա-
րում — հայաւոր է և աղիւս: Քուրդը զաղաքեղ-
նում է իւր կուրը, երբ հակառակ կողմից միջա-
մտութիւն են գործում կանայք: Նա իրան չէ
ստորացնում պատերազմի իրանից թոյլ արարածի
հետ, թէև քուրդի կնոյն կուրի ասպարեղում նոյն-
քան կատաղի է և քաջասիրտ, որքան իւր ամու-
սինը:

Կրկին անգամ ամուսնանալը, մեռած կամ
սպանված տղամարդից յետոյ, քուրդ կնոյն համար
համարվում է նախապիտան: Նա մնում է միշտ
այրի, մխիթարում է իրան այն քաղցր յիշգրու-
թիւններով, թէ իւր այրը մի լաւ աւագակ էր,
թէ նա միաց միշտ մաքուր երկչոտութեան արա-
տից, թէ նա երբեք իւր թիկունքը չը դարձ-
րուց թշնամու դէմ, թէ նա սիրում էր իրան,
որքան սիրում էր իւր արաբական նոյգինը, և
երբեք նրա սիրտը չը զրաւեց ամենադիպիկ
իւր ցեղի աղջիկներից: Նա մայրն երկչոտութիւն-
նից պատմում էր իւր որդիներին հօր գործերը,
իրատում էր հեռեւող լինել նրան, և կրկին բար-
ձրացնել հանգուցեալի յիշատակը խոր գերեզմա-
նից:

Մանկութիւնից քուրդը կրթվում է ձիւս սանձ
կառավարելու, դէպք գործածելու, մարմնամարզու-
թեան և այլ ճարպկութիւնների մէջ: Նա քաջա-
գործութիւն է համարում գողանալ, յափշտակել
ամեն ինչ, որ պէտք էր իւր ապրուստի համար:
Նա մինչև անգամ գողանում է իւր հարսնացուն:
Բախտաւոր է համարվում ամուսնութիւնը, երբ
տղամարդ-հորսը առեւտրի էր իւր սիրունին
հօր ընտանիքից: Կնոյն այսպիսի դէպքերում մի

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՍՏԱԿ Ա. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

Ապրիլի 29

Ապրիլի 27-ին այսօրիկի Հոգևոր ձեռնարկում պ. ի. Տրոփիկին ռուսաց բարձրագույն դպրոցականության և խուռն բազմութեան ներկայութեամբ պաշտպանեց իւր շարադրութիւնը աստուածաբանութեան դոկտորի աստիճանը ստանալու համար։ Այդ շարադրութեան վերնագրին է. «Հայոց եկեղեցւոյ հաւատոյ հանգանակը, որ գրեց Ներսէս կաթողիկոսը յունաց Աստուածասէր թագաւորի Մանուէլի խնդրելով. պատմական-դասանաբանական քննութիւն Հայոց եկեղեցւոյ մասին և տրա միութեան խնդրել ուղղափառ եկեղեցւոյ հետ» (Изложение вѣры церкви Армянскія, начертанное Персеемъ, католикомъ Армянскимъ по требованію Боголюбиваго Государя Грековъ Мануила. — Историкодогматическое изслѣдованіе въ связи съ вопросом о воссоединеніи Армянской церкви. С. Петербургъ 1875.)

Արդէն վերնագրից երևում է, թէ որքան հետաքրքիր է նա մեզ հայերիս համար. բայց, ինչպէս երևում է, նա պակաս հետաքրքիր չէր և ռուս հասարակութեան համար, որի խուռն բազմութեան մի մասը նստաբաններ վերա տեղ չը գտնելով, ամբողջ 5 ժամից աւելի լսում էր ոտքի վերա կանգնած։ — Եւ նպատակ չունեմ այստեղ քննադատել պ. Տրոփիկու գիրքը, թողնելով այդ մեր լրագրութեանը և կրօնագիտական, այլ միայն կամենում եմ նկարագրել այն օրուայ բանականութիւնը, աշխատելով պահպանել, որքան յիշողութիւնս կը ներէ հնդիւնակի խօսքերը և արտայայտութեան ձևերը։

Ամբիօնը բարձրանալով, պ. Տրոփիկին յայտնեց թէ այն եղբակազմութիւնները, որոնց նա հասել է իւր քննութիւններովը Հայոց եկեղեցւոյ դաւանութեան մասին, պարտնալիւում են նորա գրքի մէջ, իսկ այն օրուայ ճառի մէջ նա միայն մի պատմաբանական հայեացք գցեց Հայոց և Յունաց եկեղեցիների միութեան խնդրի վերա։ Նա նկատեց, թէ այն միջոցները, որոնք երկու կողմի աստուածաբաններն էլ առաջարկում էին միութեան համար, կարելի է բաժանել երկու տեսակի. մի քանիսը ցանկանում էին միութեան խնդրի մէջ պաշտպանել միայն կրօնի շահերը և երկու դաւանութիւններին էլ ընդունել այն, որ աւելի մօտ է ճշմարտութեանը. միւսները, ընդհակառակն, ասում էին, թէ հակառակ էր զոհել մի քանի կրօնական ներբուծիւնները քրիստոնէական սիրոյն և եղբայրական միութեանը։ Բայց այդ միջոցներից ոչ միսը չը վարդապետու և չէր էլ կարող իւր նպատակին հասնել, որովհետեւ այդ խնդրի մէջ կրօնական քողի

առանձին հպարտութեամբ է նայում իւր ընկերակիցների վերա։

Քուրդը ամենամեծ երդումը թաւախի վերա է լինում, նա առնում է մի քար և նետում է, ասելով՝ ո՞րով իմ թաւախն այս քարի պէս քրքած լինի, եթէ այսպէս, կամ այնպէս անեմ։ Թաւախը նրա ամուսնական կապն է, նա քանդված է համարվում, երբ նրանով երդում ռուսող երդմնադանց է լինում։ Այսպիսի երդումները պահանջվում են, երբ պէտք էր որ և իցէ գործի մէջ ամենահաստատ գրաւական մի մարդու հաւատարմութեան մասին։ Եւ այդ լինում է այն ժամանակ, երբ գործը վերաբերում էր ընդհանրութեան ամենակարեւոր մէկ հարցին։

Որպէս ընտրութեան ազատ որդի, նուիրելով իրան անհոգ և արձակ կեանքի, քուրդը բաւականաչափ է իւր անասուններով, Նա հովիւ է։ Նա չունի տուն և հաստատ ընտրութիւն, նրա օթեւանը իւր չաղրն է, որը կաղնում է այնտեղ, ուր կարող է իւր անասունների համար ձարակ դնել։ Չմեռնալին ձիւների միայն քշում են քուրդին իւր սիրելի սարերից, այն ժամանակ եւս մի հայի տուն միշտ պատրաստ է ընդունել ինքնակոչ հիւրին։ Այնտեղ քուրդն իւր անասունների հետ անցուցանում է ձմեռը, մինչև դարունը կրկին կոչում է նրան դէպի լեռները գիրկը։

Քուրդը կերակուրն է՝ իւր անասունների կաթը, մածուցը, պանիրը, սերը, կարաղը և իւրը. նա չէ դիպչում նրանց մահին։ Քուրդի հագուստն, ոտքից մինչև գլուխ, կաղնված է իւր անասունների բուրդից և կաշուց, իսկ այդ բոլորը պատրաստում է նրա կինը։ Տղամարդը անտեսութեան մէջ աւելի չէ խառնվում. նա պատերազմական մարդ է։ Երկրագործութիւնը, արհեստը քուրդի համար ստոր պարագայութիւններ են, որոնց նա արհամարհում է, համարելով աւայայի քործ։ Վաճառա-

տակ ծածկուած էր մի այլ, աւելի իրական խնդիր։ Յունաց կայսերութիւնը մի և նոյն ձգտումներն ունէր դէպի իւրեան յիշատակողները, ինչ որ այժմ արտայայտում է պապութիւնը, այսինքն, իւր կայսրների գաւազանի տակ միացնել բոլոր հարեան ազգութիւնները և ջնջել նոցա ազգային առանձնութիւնները. ամենալաւ միջոցը այդ նպատակին հասնելու համար նա գտաւ քրիստոնէութեան մէջ։ Միւս կողմից հպատակ աղէկը սկզբում անցկատակաբար զգալով այն վատնքը, որ սպառնում էր նոցա ինքնուրոյնութեանը, միջոց էին որոնում բաժանուելու կայսերութիւնից և այդ միջոցը գտնում Ժողովրդականութեան մէջ։ Իւր այդ կարծիքը պ. Տրոփիկին հաստատեց նորանով, որ այդ առանցքը տարածուեց հայերի և երկու ուրիշ հպատակ ազգութիւնների մէջ, որոնք դարձնով յայտնեցին իւրեանց բողոքը տիրապետող ազգի ձնող ձգտումները դէմ։ Ձգտելով նոյն անկախութեանը հասնել և մատուր դարգացման մէջ, հայերը յուսով հնարում են իւրեանց նշանագրերը, թարգմանում են սուրբ գրքերը և անեղծում են մի ազգային-կրօնական գրականութիւն։

Բացի Յունաստանից հայերը պէտք է մաքառէին իւրեանց ինքնուրոյնութիւնը պաշտպանելու համար և իւրեանց արեւելեան դրացիների՝ պարսիկների դէմ, որոնք ամէն կերպով աշխատում էին քրիստոնէութիւնը փոխարինել Հայաստանում մոգութեան։ Պարսից այդ ձգտումները աւելի վրձնողապէս արտայայտուեցան նոցա Յագեկերտ թագաւորի ժամանակ, որ ուժով կամեցաւ հասնել իւր նպատակին։ Հայերը օգնութիւն խնդրեցին Բիւզանդիայից, բայց ի հարկէ չը ստացան. այն ժամանակ, ապաւինելով միայն իւր սեփական ուժերին, այդ ազգը արկնում ներկեց իւր դաշտերը իւր եկեղեցւոյ և ազգութեան անկախութիւնը պաշտպանելու համար։

Որքան արձակ և կոպիտ էր պարսից գործ դրած ուժը, այնքան բարակ և խորամանկ էին Յունաց միջոցները մի և նոյն նպատակին հասնելու համար։ Վերջիններս աշխատում էին աւելի ներքործել քուրդութեան և հարցը պահպանել միշտ տեսական հողի վերա, մեծ զգուշութեամբ և շատ հեռուից միայն դիպչելով գործնական մասին։ Այդպէս, 12-րորդ դարում Յունաց Մանուէլ (Շնորհալի) կաթողիկոսին ընդունելու 9 ընթացք, որոնցից ութը վերաբերում էին դաւանութեանը և ծէսերին, և միայն միսը՝ վերջինը, դիպչում էր խնդրի գործնական մասին, այն է պահանջում էր՝ որ Հայոց կաթողիկոսը Յունաց կայսրից հաստատուի։ Բայց չը նայելով բոլոր զգուշութիւններին, Հայերը դարձեալ չեն խաբւում և Ներսէս կաթողիկոսը ոչ միայն հեղձում է վերջին պայմանը այլ և նոր իրաւունքներ է պահանջում Հայոց կաթողիկոսի համար։ Այնուհետեւ Յունաց բոլոր

կանութիւնը նրա մէջ դեռ պահպանել է իւր հին նահապետական ձևը. Նա տալիս է, օրինակ, քսան ոչխար և գնում է մէկ ձի. նա փոխում է իւր իւղը, պանիրը, բուրդը երկրագործի ալուրի հետ, կամ արհեստաւորի շինած այս և այն գործիքի հետ։ Եւ այս բոլորը կատարում է նա չափազանց միամտութեամբ. ամեն առևտուրի մէջ խաբւում է նա. ամեն փոխառնութեան մէջ որոտում է նրանից մանրալվաճառ իւր շահերը։ Որովհետեւ այսպիսի յարաբերութեանց մէջ քուրդը գործ չէ գնում իւր սուրը և մարմնական ուժը, որ նրա մէջ շատ զարգացած է. այլ նա բանեցնում է իւր հմտութիւնը և խելքը, սրունք նրա մէջ խիստ թոյլ են։

Քուրդը խաբեւայ չէ, նա հաւատարիմ է իւր խոստումները կատարելու մէջ. Նա միտ է միշտ ձիւտ իւր պարտքը վճարելու մէջ. Վճարել այն, ինչ որ պարտքով էր առած, և կողոպտել ուրիշի սեպհականութիւնը—երկուսն էլ մի օրինակ սուրբ են նրա համար։ Առաջինի մէջ նա պահպանում է իւր պատիւը և խօսքը. իսկ երկրորդի մէջ— իրաւունքը և արդարութիւնը։ Որովհետեւ քուրդը համար ոչինչ ընդգծւում չէ իրաւունքի և արդարութեան, երբ նա սեպհականացուցած էր սրի և յաղթութեան ուժով։ Սուրը և յաղթութիւնը արդարութեան կշիռն է նրա և իւր հակառակորդի մէջ։

Այսպէս է վարվում ամեն մի աւաղակ. այսպէս է վարվում ամեն մի հասարակութիւն, որ նոյն ընտարութիւնն ունի. այսպէս է վարվում մի ամբողջ պետութիւն, որ աւաղակի դիր է խաղում։ . .

Այսքանը բաւական համարելով քուրդի ընտարութեան և ընտանեկան կենցաղավարութեան մասին, դառնալով այժմ դէպի նրա քաղաքական կեանքի կազմակերպութիւնը։

Քուրդերի ցեղերը կառավարվում էին իրանց

շահերը ի դուր անցան, որովհետեւ այնպիսի մի ազգ, որպիսի են Հայերը, ունեցել է պատմական կեանք, երկար ու փառաւոր անցեալ, այդպիսի ազգը դժուար է կլանվում ուրիշ ազգութիւնից իսկ ազգութեան ամենահաստատ նեղուկը Հայերը տեսնում էին իւրեանց եկեղեցւոյ անկախութեան մէջ։

Միութեան խնդրի նորոգոյն պատմութիւնից պ. Տրոփիկին յիշեց այն անցքը, որ երբ ռուսաց սրբադնագոյն Սինօղը տեղեկութիւն պահանջեց Ներսէս Ե. կաթողիկոսից Հայոց եկեղեցւոյ դաւանութեան մասին, կաթողիկոսը ուղարկեց Ներսէս Շնորհալու ընդհանրականի Խուրաբաշխանի թարգմանութիւնը, հանդերձ մի համառօտ պատասխանով, որից երևում էր թէ Հայերը ինչ նըշանակութիւն էին տուել Սինօղի առաջարկութեանը, թէն, աւելացրեց նա, այդ չէր Սինօղի նպատակը։

Պ. Տրոփիկին վերջացրեց իւր ճառը այն եղբակազմութեամբ, թէ նա իւրեւ ուղղափառ եկեղեցւոյ դաւակ, կուօրէն ընդունում է, որ միայն սուրբ թարգմանութիւնն է ուղիղ, բայց, քննելով Հայոց եկեղեցւոյ միութեան խնդրի ամբողջ պատմութիւնը, նա հասնել է այն հետեանքին, թէ ամեն օտար, արտաքին միջամտութիւն այդ խնդրի մէջ միշտ եղել է և կը լինի անպտուղ ջանք։ որ ոչ միայն չի նպաստել միութեանը, այլ աւելի կը բաժանէ երկու եկեղեցիքը. այս պատճառով, ասաց նա, այդ նպատակին հասնելու ամենալաւ միջոցն է թողնել Հայոց եկեղեցին հանդիսաւ, մինչև որ նա ինքը կարօտութիւն կը դառն ուղղափառ եկեղեցւոյ հետ միանալու։

Իսկ նա այդ երբեք չի զգայ ընդհանեց նորին Սրբաշնութիւնը, Պետերբուրգի միաբնակչութիւնը (երբեմն էլ քարիս Թիֆլիզի)։

— Իմ կարծիքով անպատճառ կը զգայ պատասխանից պ. Տրոփիկին և վերջացրեց իւր ճառը, որին հետեց երկարատեւ ծափահարութիւն հասարակութեան կողմից։

Ն. Ս. միաբնակչութիւնը յետոյ խօսեցին պաշտօնական հակառակորդներ։

Առաջին հակառակորդը, յիշելով զքեի արժանաւորութիւնները, յայտնեց, որ հեղինակը մեծ ծառայութիւն է արել գիտութեանը ի լոյս ընծալ յիշու պիպիսի աղբիւրներ այդ աւարկայի վերաբերութեամբ, որոնց ոչ միայն բովանդակութիւնը այլ և անուններն անգամ յայտնի չէին։ Գետոյ նա յայտնեց իւր անհամաձայնութիւնը հեղինակի հետ մի քանի կէտերի վերաբերութեամբ. դուրսն սխալ էր համարում միաբնութեան խնդրի մէջ այդքան մեծ նշանակութիւն տալ քաղաքականութեանը. նորա կարծիքով Հայերին զրոյրը այդ խնդրում կրօնական եռանդն էր և ոչ թէ գործնական հաշիւները, աւելացնելով, որ ազգայնաւորութեան խնդրը Եւրոպայումն անգամ դարձած

էլ—աղապարիս (ցեղապետների) և շէյխերի (ղեկավարների) գլխավորութեամբ։

Գեղապետը, որ և կոչվում է մի (տէր), չէ նըշանակվում ընտրողական սկիզբներով. նա, որպէս ցեղի նահապետը, սերունդից սերունդ, փոխում է ժառանգաբար։ Ամբողջ ցեղը հպատակում է նրա իշխանութեանը խոնարհ, որդիական հնազանդութեամբ. նրա սուրը, նրա ձեռքը, նրա կեանքը միշտ պատրաստ են ծառայելու պետի կամքին և հանգրժին, որքան և չար կամ քաղաքական լինէին նրանք։ Գեղապետն է վճռում իւր ժողովրդի վեճերը, նա է պատժում յանցաւորին, նա է բաժանում աւարը յաւիտակողների մէջ, նա է առաջնորդում իւր ցեղը դէպի կոխ, նա է ուղարկում խուճիքը աւարաւորութեան համար։ Գեղապետը, ամեն առաւօտ իւր չաղրի մէջ նստած, ընդունում է ցեղի նշանաւոր աղապարներին, որոնք իրանց զինուորական մարտիկ կազմաւորումը, ներկայանում են նրան, լսելու պետի պատմութիւնները։ Այնտեղ ծխում են հիւրասիրութեան չիւրիւր, խմում են մի-մի ֆինջան դառն դահլէ։ Մի այսպիսի սալամը կատարվում է ամեն առաւօտ իւր բոլոր ճշտութեամբ։

Իսկ շէյխերը նշանակվում են գլխաւոր զինպետից, նրանք ունեն իրանց մոռնի ինքը և զաղին նրան։ Շէյխերը կատարում են ցեղի կրօնական պահանջները, որպիսի են՝ ամուսնութիւն, թրիստութիւն և հրապարակական նաւաղ։ Իսկ կուխների մէջ նրանք մասնակցում են որպէս զինուոր, բայց աւարաւորութեանց մէջ— որպէս աւաղակապետ։ Այսու ամենայնիւ, նրանք վայելում են ցեղի համակրութիւնը նոյն չափով, որքան ջերմ էր կրօնական զգացմունքը մի պարզ և կրօնավայելի ժողովրդի մէջ, որպէս էր քուրդը։

Տարեմի և վաղապարականի մարտիկ նշանաւորները բաժանված էին քուրդի զանազան ցեղերի

չէր մի հարիւր տարի առաջ. Նա անտեղի գտաւ զքեի միջի մի քանի արհամարհական, մինչև անգամ վիրաւորական խօսքերը Հայոց հոգեւոր բանաստեղծութեան և Ներսէս Շնորհալու անձնաւորութեան մասին, ասելով, որ անհերքելի է այդպէս վայր ի վերոյ մտքը յայտնել մի պատկառելի եկեղեցւոյ մասին, որի մէջ մնացել են աւելի շատ հետքեր հին-առաքելական եկեղեցւոյ, քան թէ միւս եկեղեցիների մէջ, որ պահպանել է Նիկիական հանգանակը աւելի հին ձևով, քան թէ ուղղափառ եկեղեցին։ Նա հաշուեց և մի քանի ուրիշ պակասութեան վրա զլիստորապէս շարադրութեան այն մասում, որ քաղաք էր եւրոպական աղբիւրներից, այդ պակասութիւնները վերաբերում էին աւելի մտքերի արտայայտութեան ձևերին և դարձաւաններին, որոնք անտարակոյս մեծ նշանակութիւն ունին կրօնական խնդրի մէջ, բայց որովհետեւ նոքա այնքան հասարակական նշանակութիւն չունէին, այս պատճառով եւ թողնում եմ նրանց։ Այդ հակառակորդից յետոյ հասարակութեան միջից թողաւորութիւն խնդրեց խօսելու մի հայ պարոն, որ նկատեց մի քանի անճշդութիւններ ընդհանրականի Խուրաբաշխանի թարգմանութեան մէջ, դուր, պ. Տրոփիկին, համեմատելով Յունաց, Հայոց և մօնօֆիլիտների դաւանութիւնները, ասում է, թէ ուղղափառ եկեղեցին ընդունում է Գրիստոսի մէջ երկու կամք և ներգործութիւն, մօնօֆիլիտները՝ մի, իսկ Ներսէս Շնորհալուն չէ ասում պարզ ոչ միւր և ոչ միւրը, այլ՝ դործ է ածում միջին խօսքը՝ δωδεκα, այս հիման վերա նա մեղադրում է Հայոց եկեղեցին մօնօֆիլիտութեան, իսկ Ներսէսին խորամանկութեան և կեղծաւորութեան մէջ. հայ-պարոնը նկատեց, թէ հայերէն բնագրի մէջ չը կայ այնպիսի բառ, որ համապատասխանէր δωδεκα խօսքին, այլ՝ դործ են ածուած երկու և կ'ըլին նոյնանշան բառերը, և այս պատճառով՝ անհիմն են հեղինակի մեղադրանքները։

Հայ-պարոնից յետոյ խօսեց մի քահանայ, որ կրկնեց համարեա մի և նոյն միտքը, որ յայտնեց և նորին Սրբաշնութիւնը, ընդհանրելով ճառախօսին։ Նա նկատեց, թէ թողնել Հայոց եկեղեցին հանդիսաւ մինչև որ նա ինքը զղայ կարօտութիւն միանալու ուղղափառ եկեղեցւոյ հետ, նշանակում է ոչ մի միջոց գործ չը դնել միութեան համար, և թէ այդ քրիստոնէական պարտականութեան ընդդէմէ թողնել իւր մերձաւորին նորա թշուառ (?) դրութեան մէջ և չաշխատել հանել նորան այդ դրութիւնից։

Բանակաւոր վերջնապալեց յետոյ, բոլոր հակառակորդները միաձայն դառն պ. Տրոփիկու շարադրութիւնը արժանի, կամ արժանաւոր անորհման։ Այդ վճիռը ընդունեց հասարակութիւնը երկարատեւ ծափահարութեամբ։

Ն. 1.

մէջ. Իսկ իւրաքանչիւր ցեղի մէջ երկրի բաժանունները ամենախաղաղ մասնակցութեամբ հաստատ էր իւր ամենախաղաղ մասնակցութեամբ։ Այսինքն, սկսեալ մէկ քաղաքից, մէկ դիւղից, և մէկ ընտանիքից, իւրաքանչիւրն առանձին-առանձին տէրեր ունէին, և իւրաքանչիւրի բաժինը հաստատութեամբ էր տիրողի զօրութեան բարձր կամ ստոր աստիճանին։

Ռայան — հպատակ վճարում էր այլ և այլ հարկեր հողի մշակութեան համար, իւր անասունների համար, իւր արհեստի համար, իւր ընակութեան տեղի համար, իւր գլխի համար, մի խօսքով, ամեն բանի համար, որ լրացնում էր նրա կեանքը և ապրուստի անհրաժեշտութիւնները։ Հարկերի չափը և նրանց քանակութիւնը ոչ կշիռն ունէին և ոչ սահման. դա կախված էր առնողի խղճմանցից։ Ռայանի տէր լինելու և հարկեր պահանջելու արտօնութիւն վայելողները կոչվում էին իւ աֆիլ. դրանք ցեղի մէջ որ և իցէ նշանակութիւն ունեցող մարդիկն էին։ Օրինակ, զլիսաւոր ցեղապետը ունի իւր ազգակիցները, կամ պաշտօնակալները, նրանց ապրուստի համար տալիս է մի կամ աւելի գիւղեր, որոնց հասցնելով պէտք է կառավարվին նրանք. այսպիսիները ստանում են իւ աֆիլը և Եւս իրաւունք։ Նոյն իսկ պաշտօնակալները, կամ ցեղապետի ազգակիցները ունեն ծառաներ կամ սպասաւորներ։ Նրանց ռոճիկի փոխարէն տալիս են իրանց ստացած գիւղերից մի կամ շատ տներ որպէս ծուխ, և այն ծառան վարվում է նոյն տան հետ, որպէս իւր սեպհականութեան կամ հպատակի հետ։ Ահա պատճառը, որ երկրի բաժանումները, սկսեալ ամեն նախնոր կտորներից, հասնում էր մէկ ընտանիքի։

Որպէս իշխանութիւնը, սկսեալ ցեղապետից, աստիճանաբար իջնում էր մինչև վերջին սպասաւորը, նոյնպէս սեպհականութեան իրաւունքը սկը-

ՆԱԽԱԿ ԶԱՄԱՆՈՒՑ

Մայիսի 5-ին

Եւ անցեալ շաբաթական այստեղի հայ և թուրք բնակչաց վաճառականութեան դրութիւնը նկատարելով՝ բաց թողացի զոցա վարք ու բարքը, սովորութիւնները և մտաւորական գրութիւնը, այդ պակասութիւնները լցուցանելու համար, նման քան թէ կը խօսէի հայ-հասարակութեան վերա, յառաջ կը խօսեմ այստեղի թուրքերի վրա, որոնք բնակիչներն մեծազոյն մասն են կազմում։

Բաղադրուած տիրապետում են երկու տեսակ կրօնական ցեղեր—Սիւննի և Շիա (Տաճիկ և Պարսիկ)։ Եթէ ներս թափանձնու լինենք զոցա բնութան և հասարակական կեանքի մէջ՝ մինք շատ մեծ տարբերութիւն կը գտնենք նոցա թէ կրօնական համոզմանց և թէ կեանքի արարողութեանց մէջ։ Թողնելով այժմ այն խնդիրը թէ ինչպէս է կայանում նոցա երկու ազգերի կրօնքի հաստատութիւնը և իրարից տարբերութիւնը, ես միայն այս եւ կարեւոր համարում ասել, որ Սիւննի կրօնական համոզմունքը որքան ազդեւ լինէր և որքան մոլեռանդ, սակայն աւելի ներդաշնակ և աւելի յարող է ուրիշ ազգութեանց։ Գործա բոլորովին չեն խորշում հայերի հետ նստել վերկե-նալուց։ Նոցա քաղցրախօս են և ընկերի հետ քաղցր վարվող։ Իսկ Շիաների մէջ այդ բոլորի հակառակն ենք տեսնում, —գործա սրբապղծութիւն են համարում հայի հետ նստելը անգամ, թէ և այդ խտտութիւնը երբեմն իսկութեամբ չեն կարողանում պահել, որովհետեւ զոցա հայերի հետ ամեն զեպընտ յարաբերութիւններ ունենալու ամբողջած են ակամայ։ Այդ երկու միմանց հա-կառու ազգութիւններն միայն կրօնական թշնա-մութիւններ ունեն միմանց հետ, և այդ թշնա-մութիւնները աւելի սաստկանում են, այն սար-սափելի ծիսակատարութեան ժամանակ, որը Մուսուլման սուրբ օրեր են կոչվում։ Ահաւասիկ այդ բոլոր բարբարոսութիւնները և վատ արա-րողութիւնները վկայում են նոցա կրօնքի խաւար և ծայրայեղ ատրիանի ֆանատիկ լինելը։ Այդ-պիսի շատ դրամատիկական տեսարաններ կրկն-վելով՝ իւրաքանչիւր տարի՝ իսլամի մատաղ սե-րունդն ևս ընդունում է իւր մէջ այդ ֆանատի-կական և անկողորմապաշտական դադաբարները։ Այդ երկու միմանց հակառակ ազգութեանց վերա ընդհանրապէս խօսելով կարող ենք ասել այն՝ որ զոցա հասարակութեանց մէջ միշտ նկատում ենք անկարգութիւններ, երկպառակութիւններ, դուր-սութիւններ և մարդասպանութիւններ։ Ահաւասիկ այդ բոլոր սարսափելի միջոցները ընդդէմ մարդ-կութեան ակնյայտ ցոյց են տալիս նոցա անդամ-ների բարոյական և մտաւորական դարգացման ամենաստոր աստիճանը, ըստ որում այն հասա-րակութեան անդամներն են ապահովված ամենա-

սեալ երկրի խոշոր կտորներից, հասնում էր նրա ամենախոշոր մասին։

Բայց երկիրը աղայներ (խաֆիզներ) տոհմային կամ կաթնածական ժառանգութիւն չէր, այլ նա սեպականացուցած էր սրի ուժով։ Այս պատճա-ռով, նա անգաղար անցնում էր մի տիրապետո-ղից զեպի միւսը, որի սուրեն աւելի զօրութիւն էր ստանում։

Եւ այսպէս, պատերազմը տիրողների մէջ դառ-նում էր մշտական։

Պատերազմների ժամանակ, իւրաքանչիւր հա-կառակ կողմերի, թէ յաղթութեան և թէ յաղթ-վելու միջոցին, բնակիչներն վիճակը սարսափելի էր։ Օրինակ, մէկ ցեղ կամ միւսը է խել միւս ցեղի ձեռքից երկրի մէջ ան ան մասը։ Նա կամ յաղ-թելով տիրում է, կամ աւար առնելով, թալանե-լով ամեն հանդիպածը, յետ է դառնում։ Այս-պիսի զեպերում ժողովուրդը թողնում է իւր տունը, տեղը և մշակութեան դաշտերը, իւր զէւելը միայն ազատելու համար պատսպարվում է լու-նների անմատչելի տեղերում։ Կուրը տեսնում է եր-կար։ Անասունները անտէր մնալով, թշնամին կողողաւում է, հունձքը, անխնամ մնալով, չորա-նում է ոչնչանում է։ և կեիւնները յետոյ վրա է հասնում մի նոր, ամենասարսափելի թշնամի—սովը։

Ժողովուրդը դանդաղ էր անվերջ երկիւղի և յուսահատութեան մէջ, նա չէր գիտէր, թէ էդուց կարող է հանգիստ լինել։ որովհետեւ թշնամին միշտ կանգնած էր, որպէս ասում են՝ նրա քա-մակին։ Կուրներն փոթորիկների մէջ միանգամ զրկվեցան նրա մշակութիւնների բերքից, միւս օրը նա ուտելու հաց չուներ։ Որովհետեւ նա արագա-համար պաշար չէ պահում, նախ, որ ապահով տեղ չուներ պահելու, երկրորդ, անկողը ծանրութիւնը միշտ արգելում է նրա փախուստը թշնամու ձեռ-

տեսակ յանցանքներ դործելուց, որոնք բարոյա-պէս և մտաւորապէս զարգացած են, որոնք կա-տարում են մարդկութեան պարտականութիւնը և վերջապէս հասած են կատարելագործութեան բարձր կէտին։ Աւերմն այդ բոլոր չարիքների առաջն առնելը և յանցանքների թիւը նուազեց-նելը մի և նոյն հասարակութեան պարտաւորու-թիւնն է։ Բայց տեսնեք այդ թուրք հասարա-կութիւնը ունի այդ անկարգութիւնների առաջը առնող հնարքներ, որինակ ուսումնարաններ, որոնք ընդարձակէին մատաղ սերնդի մտած-մունքները և իշխողութիւնները, կամ ընկերու-թիւններ, որոնք իրանց կարողութեան չափ թե-թեանքներն նոցա ապրուստի միջոցները և կամ վերջապէս հասարակաց ընթերցարաններ և գրա-դարաններ, որտեղ փոխանակ ի զուր տեղը դաշ-տերը և փողոցները՝ անպատշաճ թափառելը, ժողովելին աղատ ժամանակները և ըստ իրանց ճաշակի և հասկացողութեան գրեթե ընթերցա-սիրէին—ոչ և դարձեալ ոչ։ Առողջապահական կանոնների համաձայն հիմնած ուսումնարանները փոխարինում են նոցա նախադրանքներն մովթ և խոնաւ սենականները, որոնք ընդունված են նոցա մէջ իբրեւ ուսումնարաններ, որտեղ չէր կան ոչ գրա-սեղաններ աշակերտաց համար, և ոչ սեղան և աթոռ մանկավարժ-մուլայի համար, այլ բոլորե-քանքն էլ նստում են չոր գետնի վրա։ Գա-սերը կը սովորեն շատ բարձր և ամբողջ մարմինը տարուբերելով։ Դառը ցած սովորողը սաստիկ հա-րուած է ստանում մուլայի ձեռնափայտով—թուր-բիշկով։ մի խօսքով զոցա ուսումնարանների դի-ցիվլինան կայացած է միմայն ձեռնափայտով։ Աշակերտները իրանց ընդունակութեան համեմատ դասակարգելի չեն բաժանած, —լինչքան աշակերտ կայ՝ այնքան էլ դասակարգ։ Ամառը աշակերտաց արձակուրդ չեն տալիս, որովհետեւ իրանց գրպան-ներին մնաւ է։ Եթէ մի աշակերտ իւր դասը չի-մացած ժամանակը հարցնում է իրանց յառա-ջագէտ աշակերտի՝ սորա պատասխանը նորան այս է լինում —ման բունք օխմաւում, բիւմիւրամ։ Ահա, քեզ ուսումնարանէ, էլ ինչ լուսաւորութիւն և յառաջագործութիւն կարելի է պահանջել այդ խեղճ ողորմիկներից, երբ իսկով աղայիս ման-կավարժ-մուլաներ է ծնել զոցա համար։ Փոխա-նակ դանազան բարեգործական ընկերութիւններ հիմնելու, նոցա կազմել են իրանց մէջ մի քանի հակառակ կուսակցութիւններ, որոնց նպատակն է մի ամենաչին բանի համար կուրենք բարձ-րացնել և աշխատել մի կուսակցութիւն միւս կու-սակցութեանը միասին։ Փոխանակ գրադարան-ների և ընթերցարանների նոցա ունեն վաղուց պատրաստի «օթաղ» աստածներ, որտեղ ձեռքը ամեն երկրի թուրք շահիկները (պատանիներ) ժո-ղովելով՝ սկսում են մանր խոսակցութիւններ (մախալաֆներ) բաց անել։ Այստեղ զխաւոր

քից, նա աշխատում է աղայի իւր գլուխը միայն։ Կուրենք, ժողովուրդը անդադար անցնել մէկ տիրապետողից զեպի միւսը, սպառում էին բնա-կիչների կեանքը օրով, կրակով և սովով։

Յանկարծ երկրի նախկին տիրապետողն իրան յաղթված է համարում։ Երբեք զի նա յաղթողի համար չափում ոչինչ չէր թողնէ, հրդեհում է ամ-բողջ գիւղը, քանի որ և քաղաքները, կրակ է տալիս հասունացած հունձքերին, և բոլորովին անապատ դարձնելով երկիրը, որ պատկանում էր իրան, այնպէս թողնում է և հեռանում։ Այսպիսի հանդամներն երբեք չուրդը կորցնելու ոչինչ չու-նէր, որովհետեւ նա մէկ ժամանակաւոր հիւր էր, իսկ այն բոլոր կրակի նիւթ դարձած չինութիւն-ների պատկանում են հայ կամ օտարազգի բնա-կիչներին, այն բոլոր մշակութեանց արդիւնաբե-րութիւնը նրանց ձեռքերի վատասին է։ Նոյն բարբարոսութեամբ վարվում է և յարձակվողը, երբ տեսնում է, թէ տիրելու անկարող է, նա խոյս է տալիս կուրի դաշտից, իւր յետքից թողնելով ա-ւերակներ և ամառութիւն։

Ժողովուրդը միշտ դանդաղ էր նոյն զբոլման մէջ, որպէս մի թուրք, որի բոլոր քանդակ էր չար երեխայի ձեռքով, նա նստած է միշտ օրօր-վող տերերի վրա և չէր գիտէ ինչ անէ։ Բնակիչը սիրտ չուներ կրկին նորոգել իւր խրճիթը, որով-հետեւ մտածում էր՝ արեւը երկար կարող է բը-նակիլ նրա մէջ, սիրտ չուներ միւս անգամ ցա-նել իւր արտը, որովհետեւ յոյս չուներ, թէ կը յաջողվի իրան քաղել իւր հունձքը։ Նրա տան չարժական իրիդէները միշտ թաղված էին հողի մէջ, կամ նրանց համար յաղտուկ չլինած, օտարե-րի կեանք պահարաններում, որպէս զի, փախուստ-ների ժամանակ թշնամու ձեռքը չընկնէին։ Բայց յաջողվում էր նրան միւս անգամ դուրս բերել իւր կայքը գերեզմանից,—խիտ հազիւ, որովհետեւ

զերը խաղում է «մէխանէ» ասվածը, —կը նստեն երկու անդամատուրը բանաստեղծներ (չէյրներ) և կը սկսեն վիճարանել միմանց հետ թուրք և ֆարս լեզուով և ոտանաւորներով, Բայց այդ սոա-նաւորների ռադիֆները (ոտերը) այնպէս ուղիղ են բերում և հաւասար, որ լսողի միտքը և ուշքը զրավվում է։ Այստեղ թուրք պատանիները մի քանի տարի շարունակ նուիրելով իրանց այդ ա-րուեստին՝ բոլորովին կատարելագործվում են ջա-հիլութեան բոլոր առանձնութիւնները մէջ։—Դառ-նում են շատ արամիտ և բարակ հասկացողութեան տէր, լինում են շատ քաղցրախօս և նրբախօս, հաս-կանում են ամեն մի հարկանքի «էջհամ», քաղցր վարվողութիւն և ընկերի սիրտ չը կտարիլ և վերջ ի վերջով նոցա դառնում են «հարիֆ» ջանել։

Վերջապէս յոգեւածս հաղորդում եմ ընթեր-ցողաց, որ այստեղի թուրք-շահները «տաղ սէյր» (լեռնային դրօսանք) գնալը սկսեցին։

Ա. Գալստեանց

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌՍՏՐՈ-ՈՒՆԳԱՐԻԱ

Մեծ աղմուկ են արի աւստրիական Գրաց բաղադրում ուսանողներից արած անկարգու-թիւնները և արկայի բողբոջ այդ բաղադրում մասնաւոր անձի պէս աղբող դոն-Վիլհելմուս սպանիական իշխանի դէմ և նրա կնոջ դոնա-Իխանիայի դէմ։ Գոն-Վիլհելմուս աղբական է աւստրիական կայսերական տան Ուսանողների դէմ դործ են դրած կառավարութեան կողմից խիտ միջոցներ և առերը արձակված են հա-մալսարանից, մի քանիսն իր կառավարված են, իսկ բոլոր ուսանողական ընկերութիւնները ոչնչացւած են։—Քանի մի ամիս սրանից ա-ռաջ հրատարակվեցաւ Ալիէնույում Լըրց-էլըյոգ Յոհան-Վալդաուրի բըրքերը, որտեղ հեղինակը խորհուրդ է տալիս Աւստրիայի աւելի մօտեցնել Ռուսաստանին, որովհետեւ Աւստրիայի ապառնում է մօտիկ ապագայում պատրարմ Գերմանիայի հետ, որ շատ է ցանկանում միացնել իրան Աւստրիայի գեր-մանական զաւառները։ Այդ գրվածքին պա-տասխանելով հրատարակեցաւ մի այլ բըր-չիւր, ստորագրված մի աւստրիական օթի-ցեր, որ ընդհակառակ կարծում է որ եթէ պատերազմ լինելու է, նա կը լինի Ռուսաս-տանի հետ, ուրեմն պէտք է որ Աւստրիան մօտեցնէ և բարեկամաց Գերմանիայի հետ։ Աւստրիական լրագիրներն էլ սկսեցին բանա-կաւելութիւն այդ երկու գրվածքների պատճա-ռով։ «Deutsche Zeitung» լրագիրը երկրորդ գրվածքն է պաշտպանում, իսկ «Wehrzei-ting» լրագիրը աւելի առաջինի կողմն է պա-հում, աւելացնելով որ ոչ մի պատերազմ, ոչ միւսը լինելու չեն և անհրաժեշտ է Աւս-

շատ անգամ թագնողը, հանդիպելով թշնամուն, զրկվում էր կեանքից և իւր պահարանի զաղտ-նիքը տանում էր դէպի միւս աշխարհ։ Այս է պատճառը, որ Հայաստանում մինչև այսօր դե-տինը փոքրիկ ժամանակ գտնվում են այնքան շատ պղնձ, երկաթ է իրիդէներ, կանանց զարդե-րանք պատրաստելու միջոցներում թագնողը կայքեր են, որոնց տէրերն իրանց հետ իշխ են գերեզման։

Այսպէս էր այն ժամանակ հայի վիճակը Յա-րոնի և Վասպուրականի մէջ։ Նրա զբաղաւոր-թիւնն աւելի նրանում էր կայանում, որ տիրող ազգը—բողբոջ—երկրի տէրը չէր, այլ դանազան թափառական ցեղերից բաղկացած մի ամբոխ, որ կատաղի մրքիկի նման, ատուրբերվում էր երկրի մի կողմից դէպի միւսը, ոչնչացնելով ամեն կեն-դանութիւն, ամեն ինչ, որ արդիւնաբերել էր ար-հեստը և մարդու աշխատասէր ձեռքը։

Գուրդը պետական փառասիրութիւն չուներ, և ոչ հասկանալի էր նրան աշխարհակալութեան հը-պարտութիւնը։ Նա նայում էր իւր նուաճած ժո-ղովրդի վրա, որպէս այն սարերի խոտերի վրա, ուր արածում էին նրա անասունները։ Մէկը—ժողովուրդը—մատակարարում էր իրան՝ քրդի պի-տոյքները, միւսը—սարերի խոտերը—ճարպի էին տալիս նրա հօտերին, որպէս վերջինի անցնելու և մշակելու համար նա հող չէր տանում, նոյն-պէս և ժողովուրդը խնամելու մասին նա չէր մտածում։ Գուրդը վատաւ էր, թէ աշխարհի մէջ ամեն տեղ բաց է նրա ասպարեզը, քանի իւր սուրը կտրում է, քանի իւր թեքը շարժում է։

Վասպուրականի և Յարոնի նահանգներում, բացի ներքին խռովութիւններից քրդերի կողմից, լինում էին և յարձակումներ արտաքին թշնամիներից։ Քիչ չէր պատահում, պարսիկներն արշաւանքներ էին դործում և բաղվաթիւ բախտախնդիր հրո-

տրիայի համար կապիլ աւելի սերտ բարեկա-մական կապեր թէ Ռուսիայի, թէ Գերմա-նիայի հետ։

ՅԲԱՆՍԻԱ

Մայիսի 1-ին բացվեցաւ Փարիզում ար-հեստագիտական հանգես։—Գամբետաւա ձա-նադարհորում է Ֆրանսիայի զաւառներում և ամեն տեղ քարոզում է հանրապետութեան գաղափարը, ժողովուրդը Սենատի ընտրու-թիւններին պատրաստելու համար։ «Republi-que Francaise» լրագիրը հաւատացնում է որ հանրապետական գաղափարը մեծ առա-ջադիմութիւններ է տնում Ֆրանսիական առ-բոյի մէջ։—«Semaine Financiere» լրագիրը ասում է որ մայիսի 28-ին 1873 թ. պետու-թեան և Ֆրանսիական Բանկի մէջ կապած պայմանների նորերում արած փոփոխութիւն-ները շատ յարմար են Ֆրանսիայի համար։ Պետական պարտքը աւելանալու է։ Ֆինանս-ների միւնիստր, պ. Սէ, աղբային ժողովի նրա-տերի բացվելուն պէս, կը ներկայացնէ մի զե-կուցումն Ֆրանսիայի ֆինանսական ներկայ գրութեան մասին։ Ասում են որ Ֆրանսիայի ֆինանսական և տնտեսական դրութիւնը շատ լաւ է։—Աւառականութեան միւնիստր, պ. մարկիլ Գը-Մօ, գիմելով Ֆրանսիայի առե-տրական դատարաններին, պահանջեց, որ նոցա յայտնեն իրանց կարծիքը, արեւօք հարկա-ւոր է թէ ոչ փոփոխութիւններ անել օտար պետութիւնների հետ կապած աւստրական պայմանների մէջ։ Մարտէլը առեւտրական դատարանը յայտնեց թէ իր կարծիքով հար-կաւորութիւն չը կայ։ Նորա զեկուցումը վերջանում է հետեւեալ թանշաններով Մար-սէլի առեւտուրի մասին 1860 թ.ից սկսած։ Յիշուալ թէին Մարտէլի նաւահանգիստը մտած են 4474 նաւեր։ Մարտէլը մէջ ներս են բերած 508,615,228 Ֆրանկ դնով ապ-րանքներ և վաճառահանված են արարները 494,401,961 Ֆ. դնով։ Իսկ 1873 թ.ին մտած նաւերի թիւը անց մինչև 6074, եկած արարներին արժէքը հաւասար էր 869,524,608 Ֆր., վաճառահանված ապ-րանքը հասնում էր 887,127,723 Ֆրանկ դնին։

ԲԻՐԲԻԱ

Էնոգրական լուրերը ծանուցանում են, թէ նախորդ մեծ-կարգոս Էնոսէին-Վիլի փաշան նշանակվի է Նյուրնի վիլայէթի ընդ-հանուր կառավարիչ։—«Kölnische Zeitg.» լրագրում կարդում ենք, որ գերմանական հին-կաթոլիկների (աղատաւիտ) կուսակցութեան պատգամաւորութիւնը ներկայանալով Ա. Պոյսի յունաց պատրիարքին, խնդրել է նրանից, իր ներկայացուցիչներին ուղարկել գերմանական Բօնն քաղաքի մէջ լինելու եկեղեցական ժո-ղովին մամուկցիւր համար։

Սակներով թափվում էին այն երկրների վրա։ Պատերազմը վերջանում էր կրակով, արեւով, դե-րեկաւորութեամբ և աւարառութեամբ։ Այսպիսի զեպերում վտանգը հասնում էր դարձեալ ժո-ղովրդին, որովհետեւ քրդերը, եթէ թշնամուն ընդ-դիմանում կարողութեան չուներին, թողնում էին երկիրը, քաղվում էին դէպի լեռները անմատչելի տեղերը, և սպասում էին մինչև թշնամու հեռա-նալը։

Քիչ չէր պատահում, և Օսմանեան պետութիւնը ուղարկում էր զօրքեր խաղաղացնելու իւր տէրու-թեան սահմանադրուները և նուաճելու ապատմք քրդերին։ Եւ տաճիկ ասկերը վարվում էր նոյն բարբարոսութեամբ, որպէս պարսիկները։ Որով-հետեւ տաճիկ տիրապետելու կամ խապա չէր յա-ջողվում, կամ եթէ յաջողվում էր, լինում էր ժո-մանակաւոր, և ասկերը, դադարիւնաւ յետ չը դառնալու համար, յափշտակում էր ամեն հանդի-պածը։

Ահա, այսպիսի դրութեան մէջ էին այն ժամա-նակ—Արդուովի, Բայազէդի, Հախրակայ, Վանի, Բաղէշի, Մուշի, Շառախու, Սասնի, Խիզանու, Մոզաց, Չորասանլուի, Գեղուսայ —զաւառները, իրանց բաղվաթիւ հայ բնակիչներով, նրանց տի-րում էր մի աղբ, որի աջ ձեռքը—իւր սուրն էր, որի ոտքերը—իւր նոթոյն էր, որի սուրը—իւր թեթն էր, որի հայրենիքը—ամեն տեղ, որի հունձքը—թշնամու մարդկութիւնը, որի օրէնքը և իրաւունքը—իւր կամքը, որի կեանքի նպատակը—փշիկ, խորտակել և ոչնչացնել, որի դործող ոգին —իւր երկաթի սրտը, վայրենի կատաղութիւնը և զազանական յանդգնութիւնը։

(Կը շարունակվի)

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ